ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի ապրիլի 10-ի, ժամը 14:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Մարքեթինգի ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Լիլիթ Յուրիի Գալստյանի «B2B մարքեթինգ» ուսումնական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկն արդիական է: Ձեռնարկում ներկայացված է B2B մարքեթինգի էությունը, B2B գնումների գործընթացն ու գնորդների վարքագծի մոդելները, գնորդ-վաճառող փոխհարաբերությունները, B2B շուկայի հատվածավորման առանձնահատկությունները, մարքեթինգային համալիրի տարրերի և պլանավորման առանձնահատկությունները: Այն համապատասխանում է ուսումնական գրականության կառուցվածքի ձևավորմանը ներկայացվող պահանջներին, ներառում է «B2B մարքեթինգ» դասընթացի հիմնական հարցերը և նախատեսված է «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մասնագիտության բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգերի 4-րդ կուրսերի ուսանողների համար: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև դասախոսների, ասպիրանտների և գործարարների համար:

Ուսումնական ձեռնարկն ուղարկվել է 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության: 2 գրախոս փորձագետների եզրակացությունները վերադարձվել են հեղինակներին թերությունները շտկելու կամ պարզաբանումներ ներկայացնելու համար: Հեղինակների դիտարկումները ներկայացվելուց հետո ուսումնական ձեռնարկն ուղարկվել է կրկնակի գրախոսության և 2 արտաքին անանուն («կույր») գրախոսների կողմից ստացվել են դրական եզրակացություններ:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի մարտի 19-ի, ժամը 12:00-ի նիստում (արձանագրություն N 28):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով 2 արտաքին անանուն («կույր») գրախոսների դրական եզրակացությունները, մարքեթինգի ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ մարքեթինգի ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Լիլիթ Յուրիի Գալստյանի «B2B մարքեթինգ» ուսումնական ձեռնարկը** երաշխավորել հրատարակության, 200 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. ապրիլի 10
Երևան